

«Ի՞նչպիսիք ենք մենք, որքան հեռու ենք մեր հայրենիքից, որքան հեռու ենք մեր հայրենիքից, որքան հեռու ենք մեր հայրենիքից»

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵՍՆԻ

Քսաներորդ Դարի շէմքը անցնելով՝ Ներսիսյան ունի իր ուսերի վրայ ծանրացած շատ մեծ հասարակական բեռն, որի հերթանքները կրելու, ըստ երևույթին, վիճակած է Դեռ ևս գալոց նոր Դարին։ Խօսքս վերաբերում է աղքատութեան և անգործութեան խնդիրներին, որոնք ծագել են Ներսիսյան տնտեսական-հասարակական պակասաւոր կազմակերպութիւնից։ Մարդկային այն հասարակութիւնները, որոնց տնտեսական գործունէութիւնը շեկավարւում է լոկ շահադիտական սկզբունքով, ուր անհատները ոչ մի միջոցից չեն խորշում Դրամով ձեռք բերելու իշխանութիւն իրենց նմանների վրայ, ուր իսկական չարքաշ աշխատանքի արդիւնքը գրեթէ ամբողջովին ուժեղների սեփականութիւն է դառնում, այնտեղ աղքատութիւնը խորը արմատներ է գցում և ընդունում սպառնալի ձևեր։ Աղքատութիւնը շատ մեծ չարիք է, որ չի շնչում է ժողովուրդներին իրենց տնտեսական կազմակերպութեան խոշոր պակասութիւնը։ Նա այն հասարակական դժբաղդութիւնն է, որ ընդունակ է սև քօղով ծածկելու բոլոր այն ազնիւ գործերը, որ քաղաքակիրթ հասարակութիւնները կատարում են։ Նա անպարտաբեր երևույթ է քաղաքակրթական տեղ ունեցող ազգերի համար։ Անհոգութեան և անուշադրութեան մատնւած լինելով՝ նա շատ ծաւալում է և ապականում իր գոյութեամբ ժողովրդական խաւերը։ Ով գիտակցօրէն ըմբռնել է ներկայ տնտեսական-հասարակական պայմանները, ուր կազմուղ ժողովրդական հարստութիւնը չէ բաշխւում Դաստիարակների մէջ արդարութեան պահանջին բաւարարութիւն

փալու կերպով, նա կը համոզուի, որ ուրեքն միմիայն այդ պայման-
 ների կ'արարանափոխումը կարող է չեզոքացնել կամ մեծ մա-
 սամբ նոյն իսկ անհրաժեշտել աշխատութիւնը: Մենք պնդում ենք
 առանց երկբայելու, որ արդարութեան սկզբունքը մի օր պիտի
 յաղթող հանդիսանայ և իշխի մարդկանց զործերի վրայ: Սակայն
 մենք կարծում ենք, որ իրերի այս ուղղութեամբ ընթացող զար-
 գացման միջոցին՝ հասարակութիւնների պարտքն է սահմանել այն-
 պիտի հիմնարկութիւններ, որոնք մի կերպ ամբողջով և շարմանե-
 լով մեր մեծ ցաւին՝ իրենց ներգործական շերով մերձենում են
 արդարութեան պահանջին և անշուշտ պիտի համարեն իբրև
 նպաստող զործոններ չքաւոր շասակարգի կացութեան փոփոխ-
 մանը: Աշխատութիւնը առաջ է գալիս ուղղակի անգործութիւնից: Ար-
 դիւնաբերութեան կենտրոններում աշխատաւոր շասակարգը խտա-
 նում է և պահանջում զործ: Յայտնի է, որ զործարանադէրերը շնոր-
 հիւ մեքենաների կատարելագործման և նորերի ներմուծմանը՝ էլ
 չեն պահանջում նոյն չափով մարդկային աշխատանքի ոյժը, այն-
 պէս որ բազմաթիւ անգործ մնացած աշխատաւոր ձեռքերը իրար
 հետ մրցելով զործ ճարելու համար՝ շատ նւազեցնում են իրենց
 օրավարձի գինը: Վարժ բանւորները շեւ ևս էլի զործ են ճարում,
 իսկ անվարժները մնում են անգործ, այնպէս որ աշխատութիւնը
 նոցա միակ ապատարանն է շառնում: Հէնց վարժ բանւորները այնքան
 վարձ չեն ստանում իրենց աշխատանքի համար, որ նոքա գոնեա
 բաւականացնէին մարդավայել ամենահասարակ պահանջները: Նո-
 ցա բազմամարդ ընտանիքները շեղերում են գրեթէ միշտ աշխա-
 տութեան մէջ, նամանաւանդ երբոր նոցա ապրուստ հայթայթողը
 մեռնում է: Աշխատութիւնը փոփոխական պայմանների արդիւնք է,
 իսկ անգործութիւնը այդ պայմաններից է առաջանում, որոնք
 շուկաներում կուտակող մարդկային արդիւնաբեր ոյժերը աւելորդ
 են դարձնում: Աշխատ և անգործ մարդիկ աւելի ևս շարմանում
 են, երբոր այդ պայմաններին միանում են պարբերաբար անբերու-
 թիւն, հեղինքեր և նման Դժբաղդութիւններ, որոնք պաճառ են
 շառնում մեծ քանակութեամբ չքաւոր գիւղացիներին թափառել և
 գաղթել են փալիս Դէպի քաղաքներ, ուր նոցա համար գոյու-
 թեան կռիւը միմիայն յետին չքաւորութեան շուռն է բացում:

Աղքատութեան հետ սերտ կապ ունի բանւորական խնդիրը: Եւրոպայում այսպէս կոչւած բանւորական միութիւնները նպատակ ունին պաշտպանել իրենց շատակարգային շահերը կապիտալի բռնութեան դէմ, որը տառնապատիկ շահելու նպատակով իջեցնում է բանւորների վարձագինը: Բանւորական միութիւնները անդադար կոիւ են մշում գործարանատէրերի կամայականութեան դէմ վարձագինի վերաբերմամբ: Նոքա աշխատում են վարձագինը մի յայտնի աստիճանի վրայ պահպանել՝ անվարժ անգործ բանւորների կատալի մրցման հակառակ, որ աշխատում է շատ իջեցնել շուկաներում եղած վարձագինը: Այսպէս ուրեմն միութեան ուժերով զինւած՝ նոքա ընդդիմացրում են կապիտալիստ արդիւնաբերութեան հետեւանքներին, որոնք անզէն աշխատաւորների զոյութիւնը լուծում են միմիայն աղքատութեամբ: Բայց ինչ պիտի անեն այն քաղմաթիւ մարդիկ, որոնք չիլած պայմանների զօրութեամբ ընկել են աղքատութեան մէջ և անօգնական են, անվարժ լինելով մի քան անելու, ոչ մի գործ չեն ճարում և չզիտեն թէ ում դիմեն սովամահ չլինելու համար: Ում սիրտը զուրկ չէ մարդկային արժանաւորութեան զգացմունքից, նա չէ կարող սառնասիրտ նայել և չբողբել այդ սոսկալի երևոյթի դէմ, որի հետեւանքների մասին վայրկենաբար մտածելիս՝ մարդս գրեթէ մոռանում է սոցիալական այն բարիքները, որոնցով հպարտանում են քաղաքակիրթ ազգերը: Հասարակութիւնները պարտաւոր են իրենց կարգերից ծագող այդ համաճարակ ցաւին դարման անել: Այդ գործի համար եւրոպական երկիրներում սահմանւած են նաեւ աշխատանքի տներ, ուր ընդունւում են չքաւոր ու անգործ և անօգնական մարդիկ վարձով բանելու և զանազան գործերի և արհեստների վարժելու նպատակով: Այստեղ ուրեմն չքաւոր մարդիկ գտնում են իրենց համար գործ, որ նոցա երբեմնայէս փրկում է կատարեալ կորստից: Խօսքս չի վերաբերում իսկական աղքատանոցներին, որոնք մուրացկանների բուն են դարձել: Խնդիրը աշխատանոցների մասին է, որոնք պիտի գործել և աշխատել տան աղքատութեան մատնւած մշակ շատակարգը, որ հալածւում է ներկայ հասարակական պայմանների մէջ: Աշխատանոցները մի քանի երկիրներում այն բաւարար աստիճանի վրայ են, որ նոքա կարողանում են անօգնական

մարդուն ուրքի կանգնեցնել և նորա հացը հալթալթելու ճանապարհը հարթել: Նոքա զանազան տեսակի են: Ոմանք նոցանից զործ են դալիս իրենց շիմոշ անգործ մարդկանց, վարձագնով, որ միաժամանակ վարժեցնում է մի որ և է արհեստի, նայած թէ ով ինչին է ընդունակ երևում: Աշխատանոցներում ընդունւածները զիշերթիկ են կամ երթեկեկ: Նոյնպէս ընդունւում են երեսաններ, որոնք այդ հաստատութիւնների մէջ կարարեալ արհեստ են սովորում: Առհասարակ աշխատանոցներում պարարտւում են այնպիսի արդիւնքներ, որոնց համար շուկաներում մեծ պահանջ կայ: Աշխատանոցները նորագոյն ձևի խնամող հաստատութիւններ են, որոնց աշակցում են հասարակութիւնների իւրոյր նպաստները: Նոյնպէս քաղաքները և գետնութիւնները փորձնական քայլեր են անում մասնակցելու այդօրինակ զործերին: Այսպէս դնալով աշխատանոցները կը կորցնեն իրենց այժմեան բարեգործական բնաւորութիւնը: Նոքա կը դառնան հասարակական անհրաժեշտ հաստատութիւններ, որոնց պաշտօնը կը լինի պաշտպանել և հովանաւորել աշխատաւոր դասակարգը անգործութեան շէպքերում, որ նորան դժբաղդացնում են: Բայց այդ տպագոյնի զործը լինելով՝ ներկայ համաժամանակներում հասարակութիւնները պարտաւոր են աշխատանոցներ հիմնել և մշակւած արդի ձևերով օգնել աշխատացած մշակին:

Թէ որ լաիով աշխատանոցները բաւարարութիւն կը տան աշաղակող պահանջներին, որ իրականութիւնը առաջադրում է, դա կախւած կը լինի նոցա ներքին կազմակերպութիւնից: Մենք իսկպէս չենք համակրում այն ձևի բարեգործութեանը, որ ողորմաբար վաչրկենական օգնութիւն է հասցնում կարօտեալներին, որոնց մեծ մասը մուրացող աշխատներ են: Այդպիսի բարեգործական օգնութիւնը բացասական է, մինչև անգամ վնասակար, որովհետև սպասածին հակառակ արդիւնք է տալիս: Մեծ պահանջ է զգացւում այնպիսի հաստատութիւնների, ուր շիմելիս կարօտեալը չափաչէ և իմանայ, որ այդ տեղերում ոչ մի օգնութիւն ձրի չէ տրւում, այլ աշխատանքով է ձեռք բերւում, որից նա ժամանակաւորապէս զրկւել է: Մեզնում բարեգործական ընկերութիւնները չեն վաշելում ցանկալի ժողովրդականութիւն: Նոցա

գործերը չեն թողնում մնալուն հետքեր հասարակական գիտակցութեան մէջ: Վերջինս պիտի արթուն պահել այնպիսի գործերով, որոնք համակրութիւն վայելիլով հանդերձ, հրապարակ բերեն նիւթական զոհողութիւններ՝ օգնութեան գործին ժամանակակից պահանջի համեմատ կերպարանք տալու: Ինչպէս տեսնում էք, անելու շարքան կայ, և միայն անհեռարեսութիւնն և կարճամտութիւնը թերեւս ոմանց թելադրում են ասելու թէ ինչ կարող են այսուհետեւ անել մեր բարեգործական ընկերութիւնները: Ի հարկէ մենք չենք սպասում աշխատանոցներից կարտրեալ փրկութիւն չքաւոր Դասակարգի համար, որի Դժբաղդութիւնը առաջ է եկած ժողովրդական տնտեսութեան օրգանական պակասութիւնից: Մենք կարծում ենք, որ ժողովուրդների տնտեսական և հասարակական զարգացումը կը ստեղծի այնպիսի պայմաններ, որոնք կը կերպարանափոխէին այժմ գործող աշխատանոցները և կը յատկացնէին նոցա խնամող և բարեգործող բնաւորութեան տեղ՝ Դասակարգային շահերի պաշտպանի դերը: Հէնց այս աստիճանին նրանց հասցնելու համար՝ հասարակութիւնները պարտաւոր են հարթել ճանապարհը: Սա մի գործունէութիւն է, որ կը զարթեցնի մարդկանց մէջ համակրութիւն դէպի ստորադրեալների անհրաժեշտ ապահովութիւնը ժամանակակից պահանջների համեմատ:

Ռուսիայում 1882 թւականի սկզբից են հիմնւել աշխատանոցները, որոնց թիւը տարեցտարի աւելանալով՝ հասած էր արդէն 1898 թ. 130-ի: Նրանց մէջ այսօր կան այնպիսիներ, որոնք օժտւած են խոշոր կարողութիւններով: օրինակ ռուսաց Արոնշտայտ քաղաքում 1896 թին հիմնւած աշխատանոցը ունի 400.000 ռ. Դրամով և 350.000 ռուբլի արժեցող անշարժ կապքեր: Խոշոր կարողութիւն ունեցող աշխատանոցները զտնւում են նոյնպէս Պետերբուրգ և այլ ռուսական մեծ քաղաքներում: Աշխատանոցներում ընդունւում են երկու սեռի մարդիկ և շատերի մէջ նոյնպէս երեխաներ, որոնք բացի արհեստներ սովորելուց՝ տարրական կրթութիւն են ստանում: Արհեստներին անվարժ մարդկանց տալիս են փոքրիկ վարձագնով մարչելի և թեթեւ աշխատանքներ: Իսկ վարժ մարդկանց աշխատեցնում են լուրջ արհեստներով՝ ինչպէս արագ-ձագործութիւն և այլն, որոնց համար խոշոր կապիտալ ունեցող

աշխատանոցները սահմանում են արհեստանոցներ: Յամենայն դեպս աշխատանոցները արդիւնաբերում են այնպիսի ապրանքներ, որոնց համար շուկաներում մեծ պահանջ կա, ինչպէս կարպոնի արկղիկներ, որ արագութեամբ են պատրաստուում: Աշխատանոցներում գործ զոյնող չքաւոր մշակ մարդիկ մեծ մասամբ թերուս կամ անուս են: այց ինչ կ'առէք շուք այս ասլնցնող երեւոյթի մասին, երբոր շուք նկատում էք և հանդիպում սուլարածիւ ուսում ստացած մարդկանց, որոնք գործ չգործելու պատճառով, չքաւորութեան դռան մօտ են: Ապաւորալիստական հասարակութեան այս չարիքը արորացնող և անպարուարեր է: Սա մի ապացոյց է, որ ամենքից դուրսած և փաշփաշած ուսումը գոյութեան կուէի ներկայ պայմաններում չէ ապահովում մարդկանց ընկնելուց և կորչելուց: Չէ որ մտաւոր կոչւած պրոլետարիատի այսօրինակ անկումը ոչ միայն անպարուարեր է, նաև անտանելի է հասարակական և բարոյական փեսակէտներից: Պետերբուրգում գոյութիւն ունի մի աշխատանոց, ուր ընդունում են միայն ուսում ստացած անգործ մարդկանց, որոնց տրւում են, հարկաւ, իրենց մտաւոր զարգացմանը համապարասխանող պարագմունքներ — կազմել նախագծեր, մակարդակներ, քարտէզներ, թարգմանութիւն անել և այլն: Աշխատանոցների սուած դրական օգուտը շատնում է փարէցտարի շօշափելի: Նոցա թիւը այսօրեւորե պիտի աւելանայ: Ռուսիայում առաջարկւած են իշխանութեանը 50 նոր այդպիսի հիմնարկութիւններ հաստատելու *):

Տնտեսագէտ աշխատասէր և ապահովութեան համբաւ վեցելող հայ հասարակութիւնը պիտի նոյնպէս ջանայ օժտել իր բարեգործական ընկերութիւնները խոշոր նպաստներով այդպիսի աշխատանոցներ բանալու համար: Այլ ևս մեր բարեգործական ընկերութիւնների կարարած կամ կարարող գործերը մեր աչքում անբաւարար են և չեն համապարասխանում լիովին այն նպատակին, որ ժամանակակից պահանջները առաջ են դնում *): Գործունէութեան

*) Արպէս լազոնի է, Ռուսիայում այդ կարգի աշխատանոցները գործում են Կալսուսի Ալեքսանդրա Ֆէոդորովնայի բարձր հովանաւորութեան ներքոյ:

*) Թիֆլիսի Հալոց Բարեգ. ընկերութիւնը նորերս վճռեց աշխատանոց բանալ:

ձևերը միայն չեն կարող մնալ և պիտի մի կերպ փոխվեն։ Պէտք
 չը կայ մուրացող մարդկանց օգնել, այլ զլիաւորապէս փրկելու մի-
 ջոց պալ նոցա, որոնք զգնեում են անշունչ տանող ճանապարհի
 վրայ, որ բաց է անում նոցա համար մուրալու վարակիչ ար-
 հեսպը։ Պէտք կայ աշխատանքով կրթել մարդկանց և արհեստով
 պահպանել նոցա մէջ աշխատանքի այն սէրը, որ զօրացրել էին նիւ-
 թական գոյութեան աշաղակող պայմանները։ Բարեգործական հնա-
 ցած ձևերի օգնութիւնը ներշնչանալ չէ թւում հասարակական
 տրամադրութեանը և նորա ներկայ հայեացքին։ Հասարակական-
 համայնական աշխատանոցները անհրաժեշտ են, ուր աշխատացած
 մարդը առանց քաշելու և ամաշելու շիմէ գործի համար, որ
 կ'ազատի նորա ինքնապաշտպանութեան սիրտն ու ոգին։ Նորա-
 գոյն անպատեհական գիտութիւնը, որ խիստ քննութեան է ենթար-
 կւած ներկայ տնտեսական պայմանները, հակառակ չէ աշխատանոց-
 ների այդ ձևերին, որոնք ապագայում խոշոր սլաշտն կը կատարեն,
 եթէ միայն հասարակութիւնները այդ գործին նպաստեն և չեն շը
 մնան իրան շուրջ զգացնել տեղ շրական պահանջից։ Անգործու-
 թեան խնդիրը Եւրոպայում սուր կերպարանք է ստացել և ամե-
 նալուրջ գրականութիւնը բազմակողմանի ուսումնասիրութիւններ է
 ներկում խնդրի լուծումն յաջողացնելու համար։ Եւրոպայի պաշ-
 մանները անկասկած ուրոյն են և յատուկ եւրոպական կապիտալիզ-
 մին, որ իր զարգացման գագաթնակէտումն է։ Մենք կարծում ենք,
 որ տնտեսապէս յետամնաց երկիրներում աշխատանոցները կարող
 են մի գործ կատարել, որ շատերի շրութիւնը զգալապէս կը թե-
 թեացնի։ Այդպիսի գործունէութիւնն էլ քիչ չէ և արժանի ամե-
 նայն համակրութեան և յարգանքի։ Թող չ'հաւուեն այն մարդիկ
 և հասարակութիւնները, որոնք երեւոյթի իսկութիւնը ըմբռնելով
 վճռել են գործել յօգուտ չքաւոր շատակարգի, որ լուռ կերպով
 կրում է գոյութեան անհաւասար կռիւ հալածանքները։ Թող պար-
 ծենան այն հասարակութիւնները, որոնք սոցորւած արդարութեան
 սկզբունքով նոյն իսկ մի քիչ թեթեւութիւն են պատճառում այդ
 շատակարգի թշուառ շրութեանը։